

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍ- ՏԱՆՈՒՄ

I

Մեր ներկայ յօդուածով Ատրպատականի թատրոնական գործունէութեան պատմութեան մի թեթեւ և համառօտ տեսութիւնը պիտի տանք:

Կովկասում թատրոնի հիմքը դրուել է, ինչպէս գիտենք, 1859 թուականին, մի տաճկահայ պատանու ձեռքով, որ այդ ժամանակ սովորում էր Ներսէսեան դպրանոցում: Բայց Ատրպատականում թատրոնի սկիզբն դրւում է բաւական ուշ, ճիշտ 20 տարի յետոյ, 1879 թուին: Թատրոնի սկզբնաւորութեան մասին կասկածներ կային, ոմանք ասում էին, որ սկսուել է 1877 թուին, ոմանք պնդում էին, որ առաջին ներկայացումը եղել է 1878 թուին, բայց վերջին օրերս յանձնուեց ինձ հանգուցեալ Փափաղեան վարդապետի յիշատակարանը, ուր թատրոնի մասին յիշուած էր հետեւեալը.

«1879 ամի, Ապրիլին, Վանայ խնամատար ընկերութեան մի նպաստ հասցնելու և Դաւրիժու երիտասարդաց մէջ ազգային եռանդ մտցնելու պատճառաւ, քանիցս անգամ մեր տան մէջ ժողով հրաւիրեցի վառվռուն երիտասարդներ, թատրոն ներկայացնելու համար խորհեցանք և անորինեցինք և վերջապէս երեք անգամ ներկայացում տուեցինք մեր տան բակի մէջ, վրանի տակ և 8 լիրա ուղարկեցինք յիշեալ ընկերութեան»:

Այդ թուականին տէր-Մեսրոբ Փափաղեանը տեսչութեան պաշտօն էր վարում Բերդաթաղի դպրոցում: Նա, ինչպէս իր գրութիւնն է ցոյց տալիս, ձեռնարկում է թատրոնական գործը, նրա հետ միանում են և տեղացի «վառվռուն» երիտասարդներ (արժէ այստեղ յիշել պ. Ա. Փանուէլեանի անունը, որ միշտ էլ եղել է այդ ասպարիզում), մեծ մասով ուսուցիչներ: Ներկայացում կազմակերպելու և բեմի հիմքը դնելու առիթը տալիս է Վանայ խնամատար ընկերութիւնը, որին անհրաժեշտ էր նպաստ հասցնել:

Առաջին անգամ պիտի խաղային «Աշոտ Ողորմած» և «Երկու Քաղցածներ» պիէսները: Մի շարք փորձեր եղել են արդէն և բոլորովին պատրաստ են ներկայացնելու Բայց ռոտեզ ներկայացնեն, չը կայ թատերասրահ, չը կան և յարմար սենեակներ:

Սրա ճարն էլ գտնում են նրանք:

Արամեան դպրոցի յետևում կայ մեծ տարածութիւն. այնտեղ վրաններ են խփում, և ահա այս վրանների տակ պիտի տային ներկայացումը: Թեմակալ առաջնորդ Բարդուղիմէոս վարդապետն (այժմ եպիսկոպոս) էլ իր կողմից օգնում և քաջալերում է սկսած գործը: Չը մոռանանք ասել, որ տէր-Մեսրոբը կատարում էր և՛ ընթերցողի և՛ յուշարարի դեր:

Ահա այսպէս ամեն ինչ պատրաստ էր. պատրաստ էր բեմը, պատրաստ էին և դերակատարները, մնում էր միայն խաղալ: Բայց յանկարծ խոչնդոտ է առաջ գալիս: Հոգաբարձութիւնը արգելում է ներկայացումը՝ պատճառաբանելով թէ պարսից կառավարութիւնը վատ աչքով կը նայի մեզ, կը փակի դպրոցը, և ուրիշ անխուսափելի վնասների առիթ կը տանք մեր այս քայլով: Հոգաբարձութիւնը միևնոյն ժամանակ սպառնում է, որ եթէ ուսուցիչները համարձակուեն թէկուզ ուրիշ տեղ տալ ներկայացումը, անյապաղ նրանց հեռացնել դպրոցից: Այդ անմիտ սպառնալիքը ոչ մէկի վրայ չէ ազդում, նրանք եռանդուն կերպով, առանց յուսահատուելու, առաջ են տանում ահագին ջանքերով սկսած գործը:

Վրանը և բեմական բոլոր պատրաստութիւնները տեղափոխում են տէր-Մեսրոբ Փափազեանի տունը, նորից բեմ են պատրաստում և ձեռնարկում ներկայացումը: Տէր-Մեսրոբը տաճկաց հպատակ լինելով՝ հրաւիրում է նաև տաճկաց հիւպատոսին: Սիրողների խնդիրքով ներկայ է լինում և ուստայ կօնսուլը: Գալիս են նոյնպէս թուրքեր, իսկ հայ հանդիսականների թիւը ահագին է լինում:

Հետաքրքրութիւնը ընդհանուր էր, իւրաքանչիւրը ձրգտում է ներկայ լինել ներկայացմանը, տեսնելու, իմանալու համար թէ ի՞նչ է թատրոն ասած բանը: Հոգաբարձութիւնը, տեսնելով այդ ընդհանուր հետաքրքրութիւնը, կօնսուլների քաղցր և սիրալիր վերաբերմունքը դէպի այդ ձեռնարկութիւնը՝ աշխատում են ներկայ լինել, բայց նրանք տոմսակ չեն կարողանում ստանալ. նրանք մերժում են գործողների կողմից, իրանց սպառնալիքի և տգեղ վարմունքի պատճառով:

Վերջապէս ներկայացումը աջողում է: Ներկայացումը անցնում է շատ աջող և ոչ մի միջադէպ կամ խլրտում տեղի

չէ ունենում: Ներկայ եղողները հեռանում են ուրախ և գոհ: Երկար ժամանակ ընդհանուրի խօսակցութեան նիւթը լինում է այս ներկայացումը: Նրանք, որոնք առաջին ներկայացումը չէին տեսել, բոլորն ջանկութիւն էին յայտնում որ կրկնուի խաղը, չատերն էլ ուզում էին իրանց հաճելի տպաւորութիւնը կրկնել:

Այսպիսով, առաջին տարում, այսինքն 1879 թուին, թատերասէրները հնարաւորութիւն են ունենում տալ երեք ներկայացում, և դրանց արդիւնքից 8 լիւրա ուղարկում են Վանայ խնամատար ընկերութեան:

Բայց յաջորդ 1880 և 1881 թուականներին տալիս են մի շարք ներկայացումներ, պիեսները լինում են մեծ մասամբ թարգմանութիւններից ֆրանսերէնից, երբեմն էլ հէնց իրանք էին «թիւում» կամ «կազմում»:

Հետաքրքիր է մի դէպք: Տէր-Մեսրոբը տեսել էր «Վենետիկի վաճառականի» խաղը Ռուսաստանում, և նա հիմնուելով իր յիշողութեան վրայ գրում է մի պիէս, ի հարկէ նոր պիէս, բայց նոյն սիւժէտով և անուանում է «Արդար դատաստան», որ և ներկայացւում է:

Թատերասէրները, չունենալով կանացի ոյժեր, ընտրում են այնպիսի պիէսներ, որոնց մէջ ըստ կարելոյն կանայք չը լինեն. եղած կանացի դերերը կատարում էին մարդիկ, բացառութիւն կազմում էր մի դերակատարուհի—դա տէր-Մեսրոբի աղջիկն էր, որ այդ ժամանակ վարժուհու պաշտօն ունէր:

Տարօրինակ էր և տէր-Մեսրոբը ժողովրդի համար: Մատով էին ցոյց տալիս տէր-հօրը և նրա աղջկան: Փողոցով անցնելիս չորս կողմից հետաքրքրութեամբ նայում և շնչում են. «ահա «օյնբազ» տէրտէրը և նրա «օյնբազ աղջիկը»:

Այդ ժամանակ էլ չը կար յատկապէս ներկայացումների համար շինուած թատերասրահ և ներկայացումները լինում էին Տիգրան Գորոյեանի տանը, որով վերջինս մեծ ծառայութիւն է մատուցանում թատրօնական գործին:

Այդ տարիներում, ի միջի այլոց, խաղացւում են հետեւեալ պիեսները: «Փորոսողին դահ», «Ակամայ բժիշկ», «Թուշոյ բժիշկ», «Սէրը բժիշկ», «Սև հողեր», «Արդար դատաստան» և «Արշակ Բ.»:

Որպէս զի հնարաւորութիւն ունենան ներկայ լինելու և օգտուելու այդ ներկայացումներից նաև թուրքերը, թատերասէրները միշտ էլ, բացի առաջին մի երկու ներկայացումից, թուրքերէն վօդիլիներ էին դնում:

Ահա այսպէս է սկսուել և հիմքը դրուել թատրօնական գործունէութիւնը Ատրպատականում:

II

Այդպէս առաջ է տարւում գործը, երբեմնակի ներկայացումներ են լինում և յաճախում են միմիայն տղամարդիկ. թատրոնը կանանց համար մի անմերձենալի և արգելւած վայր էր: Միմիայն 1891 թուականին տեղացի մի երկու կանայք ներկայ են լինում ներկայացման, իսկ 92 թուին Լիլաւա-թաղի ուսուցչական խումբը յատկապէս կանանց համար կազմակերպում է մի ներկայացում: Հետզհետէ կազմակերպւում են գրական հանդէսներ, նոյն այդ 1892 թուին տօնածառի սկիզբն է դրւում թաւրիզում և տեղացի օրիորդը բեմ է բարձրանում, արհամարհելով բամբասանքը:

Ահա այսպէս 90-ական թուականներից սկսած բեմական գործունէութիւնը թաւրիզում տարւում է բաւարար. լինում են չնորքով պատրաստուած ներկայացումներ, կան ոյժեր—գերակատարներ, քիչ չեն և այդ արուեստը հասկացողները. դպրոցների չնորհիւ տարածում են մտաւորական պահանջները: Շինւում է յատկապէս ներկայացումների համար ընդարձակ թատերասրահներ թէ Լիլաւա և թէ Ղալա թաղերում: Եւ ահա 1900 թուին թաւրիզի երկու թաղերումն էլ առաջ են գալիս «Թատերասիրաց» ընկերութիւններ: Այժմ այդ ընկերութիւններից իւրաքանչիւրը ունի 30—32 երկու սեռի անդամներ: Մօտ նոյն թուին կազմուեց և «Երաժշտասիրաց» ընկերութիւն, որը յետոյ միացաւ Ղալա-թաղի «Թատերասիրաց» ընկերութեան հետ և կոչուեց «Թատերա-երաժշտասիրաց» ընկերութիւն:

Այժմ տեսնենք ի՞նչ է ներկայացնում բեմը գաւառներում և երբ սկսուեց այստեղ թատրոնական գործունէութիւնը:

Բեմ կազմելու և պահպանելու համար անհրաժեշտ են ոյժեր, կրթութեւ և գիտակցող անձնաւորութիւններ, իսկ ուր բացակայում են այդ գործօնները, այնտեղ անհնարին է ունենալ և թատրոնական գործունէութիւն. մինչդեռ Ստրպատականի գաւառների շատ մասերում ժողովուրդը գաղափար չունի դպրոցի մասին, էլ հրտադից կարող է առաջանալ և հիմնուել թատրոնական գործունէութիւն: Այժմ միմիայն այն գաւառներում կայ բեմ և թատրոնական գործունէութիւն, ուր կան փոքր ի չատէ կանոնաւոր դպրոցներ:

Մինչև 1894 թուականը Սալմաստում չեն եղել կանոնաւոր ներկայացումներ և թատերասրահներ—դահլիճներ, միայն 94 թուին առաջին անգամ Հաֆթուանում թեմական տեսուչ Մ. Աւետիսեանի ջանքերով չինւում է բաւական ընդարձակ

Թատերասրահ, իսկ Ղալասար գիւղում, 1900 թուին, ուսուցիչ Ս. Թադէոսեանի աշխատութեամբ շինւում է կանոնաւոր դահլիճ:

Այժմ ընդարձակ և հայաշատ Սալմաստ գաւառում միմիայն Ղալասար գիւղն է, որ ունի փոքր ինչ կանոնաւոր դպրոց, և ուր տրւում են շնորքով պատրաստած ներկայացումներ, գրական երեկոյթներ, տօնածառեր և այլն: Այստեղ դեռ շատ լայն չափերով է տիրում հարեմական փակ կեանքը, հէնց դրա համար է որ ներկայացումների դէպքում մի օր ներկայացւում է տղամարդկանց համար, յաջորդ օրը՝ կանանց համար: Այս տարի եղել են մի քանի այդպիսի կազմած ներկայացումներ:

Ուրմի գաւառում առաջին ներկայացումը եղել է 1897 թուին, չարժական բնմի վրայ: Այնուհետև էլ ներկայացումներ գրեթէ չեն եղել. միայն այս տարի մի խումբ սիրողներ տալիս են մի երկու ներկայացում և դրա արդիւնքով Ուրմի քաղաքի հայոց դպրոցի մէջ շինում են մշտական բնո:

Այս երկու գաւառներում էլ, ինչպէս տեսաւ ընթերցողը, նախաձեռնողը էլի ուսուցիչն է. նոյն երեկոյթին պատահեցինք և Թաւրիզում, նոյնն է, շատ քիչ բացառութեամբ, և միւս գաւառամասերում: Ատրպատականի շատ գաւառները, ինչպէս Ղարադաղ, Մակու և այլն, ներկայայտման երես անգամ չեն տեսել: Առհասարակ, երբ կայ դպրոց, լինում են և ներկայացումներ. փակւում է ուսումնարանը, դադարում է և ներկայացումը:

III

Այժմ անցնենք Թաւրիզի ներկայ Թատրոնական գործունէութեան, 1901—1902 տարեշրջանի ներկայացումներին:

Այս տարի մի շարք ներկայացումներ եղան Թաւրիզում: Ներկայացրեցին Թատերասիրաց ընկերութիւնները, ուսուցչական խմբերը, ներկայացրեցին վերջապէս օր, օր. Վարդիթեր և Մարիհրանոյշ Ֆելիկսանները Թատերասէրների մասնակցութեամբ: Եղել են և թուրքերէն ներկայացումներ: Խաղացին հետեւեալ պիէսները:

«Կրեյնսկու հարսանիքը», «Սկապէնի արարքները», «Մկընդիզ», Բարեգործութեան դիմալի տակ», «Կըռթ-կըռթ», «Մեծապատիւ Մուրացկանները», «Ոճրագործի ընտանիքը», «Օրթաճալու քէֆը», «Արշալոյս» (2 անգամ)—դրամա Վ. Փափուզեանի», «Մարիթան», «Մէդէա», «Երկու միամիտ նշանածներ», «Քոյր-Թերեզա», «Պառաւը խելքից էլեր է», «Անջելո», «Մկնիկ»:

Բացի այդ՝ եղել են նաեւ զրախան-երաժշտական երեկոյթներ և տօնածառեր:

Անհրաժեշտ է նկատել, որ գրեթէ բոլոր ներկայացուցիչներն թատերասրահը լիքն է եղել, շատ աննշան բացառությամբ, չը նայած որ սովորական գներն են 12—20 դռան առաջին կարգը, Գները թանկ են, անմատչելի. հէնց դրան պէտք է վերագրել այն, որ ներկայացումներին յաճախում են միայն հարուստները, շատ շատ և միջին դասակարգը. հասարակ ժողովուրդը զուրկ է: Շատ քիչ է մտածում թատրոնը ընդհանուր սեփականութիւնը դարձնել, ժողովրդի գեղարւեստական ճաշակը զարգացնել, ներկայացման պահանջ առաջ բերել. ձգտում են, որքան հնարաւոր է շատ փող գումարել: Ահա ինչն է անհամակրելին:

Մեզանում խաղացում են անխտիր ամեն տեսակի պիեսներ, մանաւանդ յաճախ լինում են ֆրանսերէնից թարգմանութիւններ, որոնք մեծ մասով հնացած և արխիվային մեկօղբամներ են, ինչպէս օր.օր. Ֆելեկեանների ներկայացրած պիեսները—«Մարի-Ժան», «Գոյր-Թերեզա», «Անճելօ»: Դրանք իրենց ակ-վախերով, շատ շատ մի բոպէ միայն կարող են ազդել: Անհրաժեշտ են հայ ժողովրդի սրտին մօտիկ պիեսներ, և դրանց օգուտը անկասկածելի է: Այդպիսի բնաւորութիւն է կրում, օրինակ, պ. Վ. Փափագեանի «Արշալոյսը», որ երկու անգամ խաղացուեց: Թիւրքա-հայերի կեանքն է կազմում այդ պիեսի նիւթը: Ջալալի և բաքրանցի քերդերը կեղեքում, հարստահարում կարճկանի հայերին, անպատում են կանանց, յափշտակում աղջիկներին, գիւղացիների արիւնը ծծում: Դանալը ոսկրին է հասել: Մի անգամ էլ Միր-Իսսուֆը (ցեղապետ) պահանջում է աղջիկ, այլեւս անհնարին է լինում դիմանալ: Գիւղի վարժապետը զլուխ է անցնում, ոտքի է կանգնեցնում գիւղացիներին, մտքեր պատրաստում. նրա հետ միանում է գաւառի երիտասարդութիւնը, միանում է գիւղի ոէսը. ամբողջ գաւառը ոտքի է: Վարժապետի ցուցմունքներով և ղեկավարութեամբ յարձակում են քրդերի վրանների վրայ, սպանում նրանց, աւերում, քանդում նրանց բոյն-որջը: Ահա այդ պիեսի սիւժետը: Այդ ներկայացմանը ամեն ջանք դործադրուել էր բնական տեսարաններ ստանալու, չքիզ դէկորացիաներ, բնական անտառ, բնական աղբիւր և այլն, որ պատրաստում էր հեղինակի յատուկ հսկողութեամբ:

Ճիշտ է, մենք չունենք դերասանական խումբ, բայց դրա փոխարէն կան թատերասիրաց ընկերութիւններ, որոնք պիտի ձգտեն պարբերական ներկայացումներ տալ: Եւ դա հնարաւոր է: Պէտք է համախմբել ու կազմակերպել ոյժերը, պիտի ձգտել թատրոնը դարձնել ընդհանուր սեփականութիւն, իսկ

դրան հասնելու համար անհրաժեշտ է նախ արժան և մատ-
չելի գներ նշանակել, պէտք է պիեսները մեր կեանքի մօտ
հարցեր շօշափեն. միայն այն ժամանակ բեմը իր իսկական նպա-
տակին կը ծառայի:

IV

Այժմ տեսնենք թատրոնական գործունէութիւնը պար-
սիկների մէջ:

Մեր յօդուածի ընթացքում տեսանք, որ այն գաւառներն
ու քաղաքներն են ունեցել թատրոն, ուր կան և եղել են
կանոնաւոր հասարակական և կրթական հիմնարկութիւններ:
Այդպիսի հաստատութիւններ պարսիկների մէջ գոյութիւն չու-
նեն, հետեւաբար, չէ կարող գոյութիւն ունենալ և թատրոնա-
կան գործ: Եւ այդպէս էլ է՝ Պարսիկները չունեն թատրոն ոչ
միայն Ատրպատականում, այլ և ամբողջ Պարսկաստանում
ներկայացում չէ եղել (ի հարկէ պարսիկների մէջ):

Պարսիկների համար թատրոն ստեղծողները հայերն են:

Ձը պէտք է մոռանալ, որ պարսիկների մէջ կան անհատ-
ներ, որոնք սիրում, համակրում են բեմը և հասկանում են
նրա կրթիչ նշանակութիւնը: Մեր ասածներին որպէս փայ-
լուն ապացոյց կարող կ' ծառայել նորին մեծութիւն ներկայ
թագաժառանգ Միրզա Մահմէդ Ալին, որ երբեմն ուրախութեամբ
գալիս է հայերի կազմած ներկայացումներին, ի հարկէ թուր-
քերէն լեզուով:

Մեր յօդուածի սկզբում, երբ դեռ խօսում էինք թատրո-
նի սկզբնական շրջանի մասին, ասացինք, որ պարսիկ հանդիսա-
կաններին գիւրութիւն տալու համար կատակերգութիւնը խա-
ղում էին թուրքերէն լեզուով. եղել է և օրինակ, որ ամբողջ
ներկայացումը թուրքերէն է խաղացուել: Այդպիսի մի ներ-
կայացում տրուել է և 1895 թուին ուսուսաց կօնսուլ Պետրովի
ղեկավարութեամբ, ուր ներկայ է լինում Պարսկաստանի ներկայ
վեհ. Շահը, որ այն ժամանակ թագաժառանգ էր և նստում էր
թաւրիղում:

Այդ անցեալումն էր, իսկ այս վերջին 5—6 տարիների
ընթացքում կրկնուել են նման ներկայացումներ: Այս սեղօնին
թուրքերէն լեզուով եղան մի քանի ներկայացումներ, որ տուե-
ցին օր.օր. ֆելիկեանները Ղալայի թատերասէրների մասնակցու-
թեամբ: Խաղացուեցին հետեւեալ պիեսները.—«Պարիզի շրջ-
մովի», «Անջկո», «Խոխուն գինուոր», և «Հրէուհի»:

Այդ ներկայացումների ժամանակ թատերասրահը, դպրոցի

բակը զարդարուած էին լինում գորգերով և դրօշակներով, նուազում էր պարսկական երթչտական խումբը, պատրաստուած էին լինում մի քանի բուֆէտներ, ժողովրդի համար առանձին, բարձրաստիճան պաշտօնեաների համար առանձին և թագաժառանգի համար առանձին: Այդպէս էր և ռուսաց ներկայ կօնսուլի ղեկավարութեամբ կազմած ներկայացմանը, որը շամախեցիների օգտին էր, ուր ներկայ էր և թագաժառանգը: Ինչպէս այդ, նոյնպէս և միւս ներկայացումներին, տոմսակները շատ թանգ էին նշանակուած. առաջին երկու կարգերը բռնում էին բարձր աստիճանաւորները, որ լինում է կամաւոր նուէրներով, առանց տոմսակի, իսկ երրորդ կարգից տոմսակներով էին: Երկրորդը նշանակուած էր 6 թուման (12 ռ.), վերջին կարգը 1 թուման (2 ռ.): Ռուսաց կօնսուլի կազմած ներկայացման ժամանակ առաջին երեք կարգերի տոմսակ ունեցողները օգտուում էին բուֆէտներից ձրի:

Նորին մեծ. թագաժառանգը, ինչպէս ասացինք, ուրախութեամբ յաճախում էր այդ ներկայացումներին: Այս սեզօնին նորին մեծութեան առաջարկութեամբ Ֆելեկեան քոյրերը երկու ներկայացում տուեցին պալատում խանմի և պալատական ծառայողների համար: Այնտեղ, պալատի մօտ գտնուած չինութեան սենեակներից մէկի մէջ՝ ծալովի կուլիսներից պատրաստում են փոքրիկ բեմ, որը յատակի շարունակութիւնն է կազմում և ծածկուած է գեղեցիկ գորգերով: Սենեակը կարուած է լինում թափանցիկ վարագոյրով, որի ետևից խանմը իւրայիններով և նորին մեծութիւնը նայում են ներկայացման: Այնտեղ լինում են նաև ներքինիներ, որոնք իրանց կեանքում այդպիսի բան չը տեսած լինելով, մեծ հետաքրքրութեամբ հետևում են ամբողջ ներկայացմանը:

Ներկայացումը հաճելի տպաւորութիւն է թողնում թէ թագաժառանգի և թէ խանմի վրայ: Ներկայացման վերջը քոյրերը ներկայանում են խանմին և թատրոնի մասին մի քանի խօսք են փոխարինում նրա հետ:

Այսպէս է վերջանում առաջին ներկայացումը. սա առաջին օրինակն է. մինչև այժմ չէ պատահել, որ պալատում ներկայացում տրուի, այն էլ խանմի համար: Այդ ներկայացումից չէ անցնում երկար ժամանակ, և պալատում տեղի է ունենում երկրորդ ներկայացումը, որը նոյնպէս աջող է անցնում և գոհ են մնում բոլորն էլ:

ԵՐ. ՖՐԱՆԳԵԱՆՑ